

Տրամաբանական խնդիրներ



Սիրելի փոքրիկ, այսուհետ պարբերաբար կայքում կտեղադրվեն տրամաբանական խնդիր-հարցերի շարքեր: Քո ուշադրությանն ենք ներկայացնում առաջադրանքների առաջին տասնյակը:

1. Ո՞ր բառն է միշտ գրվում սխալ:
սխալ
2. Տարվա ընթացքում քանի՞ ամիս ունի 28 օր:
Բոլոր ամիսներն ունեն 28 օր
3. Ի՞նչ արագությամբ պետք է վազի շուկը, որպեսզի չլսի իր պոչին կապված թիթեղյա ամանի ձայնը:
Շուկը պետք է տեղում կանգնի
4. Շուկը կապված էր 10-մետրանոց թելով, սակայն կարողացավ ուղիղ առաջ շարժվել մոտ 200 մետր: Ինչպե՞ս դա հաջողվեց նրան:
Պարանի մյուս ծայրը ոչ մի տեղից կապված չէր
5. Ինչպե՞ս կարելի է թռնել տասը մետրանոց սանդուղքից և չվնասվել:
Թռնել ներքևի աստիճանից
6. Ի՞նչ կարելի է տեսնել փակ աչքերով:
Երազներ
7. Այն ի՞նչն է, որ կրակի մեջ չի այրվում, իսկ ջրի մեջ չի սուզվում:
Սառույց
8. Ի՞նչ պետք է անել, երբ տեսնում ես կանաչ մարդուկին:
Անհրաժեշտ է անցնել փողոցը:

Կանաչ մարդուկը լուսակրի կանաչ ցուցիչի վրա է

9. Անվանեք ցանկացած 5 օր՝ դրանք չհամարակալելով (1-ին օր, 2-րդ օր...) և չօգտագործելով ամսվա (ամսի 1, ամսի 2 և այլն) ու շաբաթվա անունները (երկուշաբթի, երեքշաբթի և այլն):

Երեկ չէ առաջին օրը, երեկ, այսօր, վաղը, վաղը չէ մյուս օրը

10. Երեսուներկու գիևփորները մեկ հրամանատար ունեն:

Առամներն ու լեզուս